տանութիւններ, խմբերգներ, փոքրիկ տրամախօսութիւններ, հայկ. պարեր եւն., իսկ Նախակրթարանի աշակերտներ արտասանեցին նաեւ Արաբերէն եւ Անգլերէն լեզուներով: Այս բոլորը յայտաբար նշաններ էին Վարժարանի ուսուցչական կազմին տարուան մը խնամքոտ ու կրթանուէր աշխատանքին:

Հանդէսի աւարտին, Գերշ. Սրբազան Հայրը բաժնեց Մանկապարտէզի բաժնէն ընթացաւարտ 24 երկսեռ փոքրիկներուն աւարտական վկայականները ու «Պահպանիչով» օրհնեց ամէնքը:

---

## ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

### Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

●

Յաջորդ Կիրակի, 9 Յուլիս, իրիկուան ժամը 6.30ին, ժառանգաւորաց Վարժարանի հանդիսասրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Վարժարանի Երկրորդական բաժնի Ամավերջի Հանդէսը, նախագահութեամբ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Եպս. Ասլանեանի եւ ի ներկայութեան Հոգշ. Հարց եւ հրաւիրեալներու կոկիկ բազմութեան:

Հանդէսին յայտագիրը կը բաղկանար ատենախօսութիւններէ եւ արտասանութիւններէ, Հայերէն, Արաբերէն եւ Անգլերէն լեզուներով, ընթացաւարտ դասարանի աշակերտուհիներուն կողմէ յաջողութեամբ կատարուած, ինչպէս նաեւ Վարժարանիս երգչախումբին կողմէ եւ ներդաշնութեան ուսուցիչ Պր. Սահակ Գալայճեանի խմբավարութեամբ կատարուած խմբերգներէ: Կարդացուեցան նաեւ շարադրութիւն եւ ուղերձ: Վարժարանի բարեջան Տեսուչ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ.ի տարեկան տեղեկագրի (տե՛ս էջ 232) ընթերցումէն եւ շրջանաւարտուհիներուն համար երգուած «Հրաժեշտի Երգէն» ետք, Նախագահ Սրբազանը բաժնեց 8 շրջանաւարտուհիներուն աւարտական վկայականներն ու յառաջադէմ աշակերտներու մրցանակները, եւ իր փակման խօսքով յորդորեց ընթացաւարտները որ հաւատարիմ մնան այն ոգիին՝ որ Թարգմանչացով արուեցաւ իրենց, ի գին մեծամեծ զոհողութիւններու:

Հանդէսը փակուեցաւ միաբերան երգուած Տէրունական աղօթքով ու Ս. Հօր օրհնութեամբ:

---

# ՀԱՆԳԻՍՏ

## Տ. ՄԱՄԲՐԷ ԱՐՔԵՊՍ. ԳԱԼՖԱՅԵԱՆԻ

Նիւ Եորք, 17 Յուլիս 1961

Ամենապատիւ Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեան

Պատրիարք Հայոց

Երուսաղէմ

Սոյն խորունկ ցաւով կը հաղորդենք վախճանումը Մամբրէ Արքեպս. Գալֆայեանի որ տեղի ունեցաւ այսօր, Յուլիս 17ին, Միամիի մէջ: Վերջին օծման կարգը պիտի կատարուի Նիւ Եորք, Յուլիս 22ին, Շաբաթ առաւօտեան:

ՍԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ Հայոց Հիւս. Ամերիկայի

*«Սիոն»ի յաջորդ թիւով պիտի անդրադառնանք Ս. Աթոռոյս Միաբան այս պատուական եկեղեցականի կեանքին եւ գործունէութեան:*

---

تصدرها – بطريركية الارمن الارثوذكس المدير والمحرر المسؤول – صاحب النيافة رئيس الاساقفة هايكازون أبراهاميان

يوليو – اغسطس ١٩٦١ تطبع في مطبعة دير الارمن – القدس العدد ٧ – ٨

Proprietor – His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor – Archbishop Haïgazoun Abrahamian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ГСС Библиотека
digitised by ՀՍՍՌ ... A.R.@